

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐՅԵԿՏԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՅԵ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով դատական պաշտպանության, արդար դատաքննության և դրանց բովանդակությունից բխող՝ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը (ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներ), միաժամանակ ամրագրում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու կարգն ու պայմանները (ՀՀ Սահմանադրության հոդված 83.5, մաս 1): ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն էլ (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ), որպես դատական պաշտպանության իրավունքին վերաբերող համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող հիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված շարադրող օրենք, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման կարգն ու պայմանները, այդ թվում՝ բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը:

Հայաստանի Հանրապետությունում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացումը կապվում է օրենքով սահմանված որոշակի հանգամանքների և պայմանների հետ, որոնք իրավաբանական գրականության մեջ անվանվում են նաև վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման նախնական պայմաններ¹: ՀՀ ՔԴՕ 205-212 հոդվածները սահմանում են վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման հիմնական նախադրյալները, այն է՝ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, օբյեկտը և բողոքարկման ձևական պայմանները:

Հարկ է նշել, որ վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման նախադրյալները նույնանում են վերաքննիչ վարույթի ծագման նախադրյալների հետ, քանի որ վերաքննությունն առաջանում է օրենքով սահմանված կարգով բողոքարկման իրավունքի իրականացման արդյունքում: Հետևաբար, վերաքննիչ վարույթն անձի դատական պաշտպանության իրականացմանն ուղղված, պետության կողմից ամրագրված իրավական երաշխիք է և ուղղակիորեն ածանցված է առաջին ատյանի դատարանի ակտերի բողոքարկումից:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են վերաքննիչ բողոքարկման օբյեկտը կամ այն օբյեկտիվ նախադրյալները, որոնք կազ-

¹ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատարակություն, Եր., 2007, էջ 588:

մուն են բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը²: Ընդ որում, իրավաբանական տեսանկյունից ավելի ճիշտ է օգտագործել օբյեկտ կամ օբյեկտային նախադրյալ եզրույթները, մասնավորապես, օբյեկտ՝ վերաքննիչ վարույթի ծագման, և օբյեկտային նախադրյալ՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման պարագայում:

Վերաքննության օբյեկտը վերաքննիչ բողոքարկման պատճառով վերանայման ենթակա դատական ակտն է, այսինքն՝ բողոքարկվող վճիռը կամ որոշումը: Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ վերաքննության օբյեկտի կամ օբյեկտային նախադրյալների ուսումնասիրությունը բավականին մակերեսային է, քանի որ հեղինակները սահմանափակվել են միայն առանձնացնելով բողոքարկման օբյեկտը: Այսպես, Ռ. Գ. Պետրոսյանը նշում է, որ վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման հիմնական օբյեկտիվ նախադրյալն այն վճիռն է (լրացուցիչ վճիռը), որի կապակցությամբ բերվում է վերաքննիչ բողոքը: Մ. Կ. Տրետուշնիկովը կարծում է, որ վերաքննիչ բողոքարկման օբյեկտը դատավորի՝ օրինական ուժի մեջ չմտած որոշումներն են և այլն: Սակայն վերոնշյալ մոտեցումները չեն կարող սպառել վերաքննիչ բողոքարկման օբյեկտի բովանդակությունը: Մեր կարծիքով, առաջին հերթին պետք է տարբերակել վերաքննիչ բողոքարկման օբյեկտ և վերաքննության առարկա հասկացությունները:

Վերաքննիչ բողոքարկման օբյեկտը առաջին ատյանի դատարանի բոլոր այն դատական ակտերն են, որոնց համար օրենքով սահմանված է վերաքննության հնարավորություն: ՀՀ դատական օրենսգրքի³ 39 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է ընդհանուր իրավասության դատարանների գործն ըստ էության լուծող դատական ակտերը: Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում (ՀՀ դատական օրենսգրքի 39 հոդվածի 2-րդ մաս), իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Սրանից հետևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել բոլոր դեպքերում, իսկ միջանկյալ դատական ակտերի վերաքննությունը հնարավոր է միայն, երբ օրենքով ուղղակիորեն նախատեսված է նման հնարավորություն: Ընդ որում, վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտը և վերաքննության (վերաքննիչ վարույթի) օբյեկտը նույնանում են միայն ոչ լրիվ վերաքննության պարագայում: Այսպես՝ ՀՀ ԶԴՕ 219 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Իսկ մինչև ոչ լրիվ վերաքննության անցնելը ՀՀ

² Տե՛ս «Гражданский процесс». Учебник. М., 2003, էջ 483-488, Сахниова Т. В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М., 2008, էջ 620-629, Фурсов Д. А., Харламова И. В. Теория правосудия в кратком трехтомном изложении по гражданским делам. Том второй: Гражданское судопроизводство как форма отправления правосудия. М., 2009, էջ 481, «Арбитражный процесс». М., 2003, էջ 520-524:

³ ՀՕ-135-Ն, ՀՀԴՏ № 20(544), 18.04.2007:

ՔԴՕ 217 հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով կրկնակի քննում է գործը:

Օրենսդրական նման ձևակերպման պայմաններում ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ բողոքարկման և վերաքննության օբյեկտները նույնանուն են, քանի որ բոլոր դեպքերում վերաքննիչ ատյանում վերանայվում է բողոքարկված դատական ակտը: Մինչդեռ լրիվ վերաքննության դեպքում վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտը բողոքարկվող դատական ակտն էր, իսկ վերաքննության (վերաքննիչ վարույթի) օբյեկտը՝ առաջին ատյանի դատարանում քննված գործը:

Ինչ վերաբերում է վերաքննության օբյեկտի և առարկայի տարբերությանը, ապա նախևառաջ պետք է նկատի ունենալ, որ վերաքննիչ ատյանը որոշում է կայացնում բողոքում ներկայացված պահանջի կապակցությամբ: Այսպես, ՀՀ ՔԴՕ 210 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվի բողոք բերող անձի պահանջը: Ուստի, առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկող անձը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակի բեկանել դատական ակտը, մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի ակտը, ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը և այլն: Այսինքն՝ բողոքարկողն իրավունք ունի ներկայացնել ՀՀ ՔԴՕ 221 հոդվածով նախատեսված՝ վերաքննիչ դատարանի լիազորությունների մեջ մտնող կոնկրետ գործողություններ կատարելու մասին պահանջ: Միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում բողոք բերողը կարող է պահանջել վերաքննիչ դատարանից կայացնել նոր միջանկյալ դատական ակտ կամ վերացնել առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը (ՀՀ ՔԴՕ հոդված 221, մաս 2, հոդվ. 221³, մաս 3): Ընդ որում, վերաքննիչ բողոքում կարելի է ներկայացնել միայն վերաքննիչ դատարանի լիազորությունների հետ ուղղակիորեն կապված պահանջ: Անիմաստ է վերաքննիչ ատյանից պահանջել կատարելու այնպիսի գործողություն, որի լիազորությունը վերջինս չունի: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով (ՀՀ Սահմանադրության հոդված 5): Հետևաբար, վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջը պետք է համապատասխանի վերաքննիչ դատարանի՝ ՀՀ ՔԴՕ 221 հոդվածով նախատեսված որևէ լիազորությանը:

Նույն դատական ակտի բողոքարկման արդյունքում բողոք բերողը հնարավորություն ունի ներկայացնելու տարբեր պահանջներ, ըստ նպատակահարմարության ընտրելու օրենքով նախատեսված պահանջներից յուրաքանչյուրը: Հետևաբար, նույն օբյեկտին վերաբերող վերաքննության առարկան կարող է տարբեր լինել: Վերաքննիչ ատյանը որոշում է կայացնում վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի կապակցությամբ: Վերաքննիչ դատարանը դատական ակտի վերանայմամբ ամբողջությամբ կամ մասնակի բավարարում կամ մերժում է վերաքննիչ բողոքը, այսինքն՝

բողոքարկողի պահանջը: Վերաքննիչ ատյանի վերջնական եզրահանգումները վերաբերում են բողոքում ներկայացված պահանջին, որը բավարարելու կամ մերժելու իրավական հետևանքը մերժելու դեպքում դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելն է, բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու դեպքում՝ համապատասխանաբար դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելը և բեկանված մասով գործը նոր քննության ուղարկելը, գործի վարույթը կարճելը, հայցն առանց քննության թողնելը, դատական ակտը մասնակի բեկանելն ու փոփոխելը և այլն:

Ասվածից հետևում է, որ հարկ է առանձնացնել վերաքննության օբյեկտ և առարկա հասկացությունները:

Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննության օբյեկտով, քանի որ պարտավոր է դատական ակտը վերանայել միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Մինչդեռ, վերաքննիչ դատարանը բողոքում նշված պահանջով կամ բողոքի առարկայով կաշկանդված չէ: Օրինակ՝ եթե կողմը վերաքննիչ բողոքում պահանջել է ամբողջությամբ բեկանել առաջին ատյանի դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության, իսկ վերաքննիչ վերանայման ընթացքում պարզվում է, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, վերաքննիչ ատյանը, անկախ բողոքարկողի պահանջից, պետք է բեկանի առաջին ատյանի դատարանի դատական ակտը և կարճի գործի վարույթը: Այսինքն՝ եթե վերաքննիչ ատյանում պարզվում է տվյալ գործով քաղաքացիական դատավարությունը բացառող հանգամանք (գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմք), որն առկա է եղել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ, վերաքննիչ ատյանը, անկախ բողոքում ներկայացված պահանջից, պետք է ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանի առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը, կարճի գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության թողնի հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վերաքննիչ բողոքի առարկայով կաշկանդված չլինելու հանգամանքը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2009 թ. որոշման դեմ Կառլեն Գրիգորյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված 26.06.2009 թ. որոշման բովանդակությունից: Մասնավորապես՝ Ռ. Պոտիյանն իր վերաքննիչ բողոքով խնդրել էր բեկանել դատարանի 13.11.2008 թ. վճիռը և գործն ուղարկել նոր քննության, մինչդեռ վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի պահանջի շրջանակներից, վճիռը բեկանել էր և փոփոխել: Բողոքարկողը գտել էր, որ խախտվել է ՀՀ ՔԴՕ 219 հոդվածը, քանի որ վերաքննիչ ատյանը դուրս էր եկել բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Վճռաբեկ դատարանը բողոքն անհիմն էր համարել այն պատճառաբանությամբ, որ Ռ. Պոտիյանի վերաքննիչ բողոքի հիմքը նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներն են, իսկ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատա-

րանի 13.11.2008 թ. վճիռը բեկանելը և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելը վերաքննիչ բողոքի պահանջն է: Հետևաբար, վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին, դատական ակտը բեկանելով և այն փոփոխելով, իրականացրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221 հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի ուժով իրեն վերապահված լիազորությունը, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219 հոդվածի 1-ին կետը չի խախտել:

Առանձին ուսումնասիրության են արժանի վերաքննության օբյեկտ հանդիսացող դատական ակտերը, որոնք իրավաբանական գրականության մեջ դասակարգման են ենթարկվել տարբեր հիմքերով⁴: Սակայն վերաքննիչ բողոքարկման օբյեկտի ուսումնասիրության տեսանկյունից առավել հատկանշական են գործն ըստ էության լուծող և միջանկյալ, բողոքարկման ենթակա և ոչ ենթակա դատական ակտերի դասակարգման խմբերը, քանի որ տարբերվում է վերոնշյալ դատական ակտերի բողոքարկման կարգը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140¹ հոդվածը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով, իսկ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: Ուստի, ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել է առաջին ատյանի դատարանի վճիռների բողոքարկման հնարավորությունը բոլոր դեպքերում, իսկ որոշումների բողոքարկումը պայմանավորվել է օրենքով ուղղակիորեն նախատեսված հնարավորության առկայությամբ: Այսպես, «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» թիվ ԵՇԴ/0922/02/08 քաղաքացիական գործով 2009 թվականի հունվարի 29-ին կայացված որոշմամբ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, պատճառաբանելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի 4-րդ մասի և 221³ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի (գործն ըստ էության չլուծող դատական ակտի) դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում, իսկ ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքում միջնորդությունը մերժելու մասին որոշման՝ որպես միջանկյալ ակտի բողոքարկում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, եզրակացրել է, որ տվյալ դեպքում առկա է վերաքննիչ բողոքի վերադարձման ՀՀ քաղաքացիական դատավարության 213 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքը, բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, և մերժել է դրա վերաքննիչ բողոքարկումը ու վերադարձրել է վերաքննիչ բողոքը⁵:

⁴ Տե՛ս **Ս. Գ. Մեղրյան**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., 2010, էջ 13-43:

⁵ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵՇԴ/0922/02/08 քաղաքացիական գործով 29 հունվարի 2009 թվականին կայացված «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

Հարկ է նշել, որ մինչ քաղաքացիական դատավարության օրենսդրական վերջին փոփոխությունները վերաքննության օբյեկտ էին հանդիսանում առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտերը, որի վերաբերյալ դրույթներն իրենց համարժեք արտացոլումն էին գտել նաև քննարկվող խնդրի ուսումնասիրությանը վերաբերող մասնագիտական գրականության մեջ⁶: Սակայն ՀՀ ՔԴՕ 140 հոդվածի նոր խմբագրմամբ ամրագրվեց, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ՝ եթե գումարը բռնագանձելու պահանջի մասին կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, որի դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից⁷: Խնդրո առարկա հոդվածի նոր խմբագրությամբ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքը չի պայմանավորվում վերաքննիչ բողոքարկմամբ, ուստի, անկախ այն հանգամանքից՝ վերաքննիչ բողոք բերվել է, թե ոչ, վճիռը մեկ ամիս հետո մտնում է օրինական ուժի մեջ: Հետևաբար, ՀՀ ՔԴՕ 207 հոդվածի 1-ին մասը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետում այդ ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու հնարավորությանը, ինչն ընդհանրապես չի կասեցնում կամ բացառում վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Քանի որ ՀՀ ՔԴՕ 214 հոդվածը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, վերաքննիչ դատարանը կայացնում է վերանքնիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, կարող ենք ասել, որ վերաքննության օբյեկտ են հանդիսանում առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

Ասվածը հիմք է տալիս տարանջատելու վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտ և վերաքննության (վերաքննիչ վարույթի) օբյեկտ հասկացություններն այն պարզ պատճառով, որ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած վճիռների դեմ, իսկ վերաքննության կարգով վերանայվում է արդեն օրինական ուժի մեջ մտած վճիռը: Այդ տեսակետից կարելի է բացառություն համարել միայն ՀՀ ՔԴՕ 140 հոդվածի 4-րդ կետով սահմանված դրույթը, որի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բացառիկ դեպքերում կարող են հրապարակման պահից դատարանի կողմից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանք-

⁶ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 588, **Каравалева Е. В.** Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дисс. к. ю. н. Саратов, 2005, էջ 88-121, **Сахнова Т. В.** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М., 2008, էջ 620-629 և այլն:

⁷ ՀՕ-277-Ն, ՀՀՊՏ, № 66 (590), 26.12.2007:

ներ կողմի համար: Նման ակտերը ենթակա են բողոքարկման նույն դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած ակտերի համար սահմանված կարգով և ժամկետներում:

Յետևաբար, իրավակարգավորման ներկայիս պայմաններում վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտ կարող են լինել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող՝ օրինական ուժի մեջ մտած և չմտած դատական ակտերը, իսկ վերաքննության օբյեկտ են հանդիսանում միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Թեև դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն չի կարգավորում վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն բողոքարկելու հնարավորության հարցը, վերաքննիչ վարույթը կարգավորող նորմերի տրամաբանությունն ինքնըստինքյան հանգում է դրան (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 210, 219 և այլն): Վերաքննության կարգով առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կարող է բողոքարկվել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակիորեն: Այսինքն՝ բողոքարկման օբյեկտ կարող է հանդիսանալ նաև դատարանի վճռի մի մասը, կարելի է ինքնուրույն բողոք բերել վճռի ցանկացած մասի դեմ, որը, բողոքարկողի կարծիքով, իր համար պարունակում է անբարենպաստ (ոչ իրավաչափ) հետևանքներ: Ընդ որում, այս պարագայում վերաքննիչ բողոքարկման և վերաքննության (վերաքննիչ վերանայման) օբյեկտները սահմանային առումով նույնանում են, քանի որ վերաքննիչ ատյանը չի կարող դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների, ինչպես նաև դատական ակտի բողոքարկված մասի սահմաններից: Իրավաբանական գրականության մեջ ընդունված է, որ գործնականում հնարավոր է բողոքարկել առաջին ատյանի դատարանի վճռի պատճառաբանական և եզրափակիչ մասերը, քանի որ գործին մասնակցող անձինք կարող են համաձայն չլինել ինչպես վճռի եզրափակիչ մասի, այնպես էլ դատարանի պատճառաբանությունների հետ⁸: Եթե վճռի պատճառաբանական մասում դատարանը նշում է գործի քննության ընթացքում պարզված այն հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցը մերժելու փաստարկները, ինչպես նաև բոլոր այն իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս, ապա գործին մասնակցող անձը կարող է համաձայն չլինել դատարանի կողմից հաստատված համարված որևէ հանգամանքի հետ, որպեսզի հետագայում նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս դրանք ձեռք չբերեն նախադատելիության հատկանիշ (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 132, 52): Մեր կարծիքով, նման տեսակետն արդարացված կարելի է համարել միայն լրիվ վերաքննության պարագայում, երբ վերաքննիչ ատյանը գործը քննում է լրիվ ծավալով, գործում եղած և լրացուցիչ ներկայացված ապացույցների հիման վրա: Ոչ լրիվ վերաքննության պարագայում վճռի պատճառաբանական մասի դեմ ինքնուրույն վերաքննիչ բողոք բերելն անիմաստ է: Այսպես՝ վերաքննիչ բողոքում բողոք բերող անձը կարող է ներկայացնել միայն այնպիսի պահանջ, որը համապատասխանում է ՀՀ ՔԴՕ 221 հոդ-

⁸ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 588:

վածով վերաքննիչ դատարանին վերապահված լիազորություններին: ՀՀ ՔԴՕ 221 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը: Սրանից հետևում է, որ օրենսդիրն առաջին աստիճանի դատարանի վճիռը պատճառաբանելու իրավազորությունն ուղղակիորեն պայմանավորել է վերաքննիչ դատարանի կողմից բողոքը մերժելու հանգամանքով: Ուստի, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտը, բողոքարկելով դատական ակտի պատճառաբանական մասը և պահանջելով ճիշտ պատճառաբանել վճիռը, չի կարող հասնել ցանկալի արդյունքի, քանի որ վերաքննիչ դատարանը լիազորված չէ բավարարելու վերաքննիչ բողոքը և միաժամանակ պատճառաբանելու առաջին աստիճանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը:

Այստեղից հետևում է, որ վերաքննության ներկայիս իրավակարգավորման պայմաններում գործնականորեն կարող է ամբողջությամբ կամ մասնակի բողոքարկվել առաջին աստիճանի դատարանի վճռի եզրափակիչ մասը: Բողոքարկողը կարող է համաձայն չլինել հայցապահանջները կամ դրանցից մեկը բավարարելու կամ մերժելու, սկզբնական և հակընդդեմ հայցերը լրիվ կամ մասնակի բավարարելու դեպքում հաշվանցի արդյունքում գումարի բռնագանձման վերաբերյալ դատարանի եզրահանգումների, ինչպես նաև գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու կամ վճռի կատարման սահմանված կարգի հետ:

Վերաքննիչ բողոքարկման ինքնուրույն օբյեկտ է նաև առաջին աստիճանի դատարանի լրացուցիչ վճիռը: ՀՀ ՔԴՕ 142 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի լրացուցիչ վճիռ կայացնելու, եթե լուծելով իրավունքի մասին հարցը՝ չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը, վճիռ չի կայացրել որևէ պահանջով, որով գործին մասնակցող անձինք ապացույցներ են ներկայացրել, չի լուծել դատական ծախսերի հարցը: Ուստի, գործին մասնակցող անձը կարող է համաձայն չլինել լրացուցիչ վճռի առարկա հանդիսացող վերոնշյալ հարցերի լուծման վերաբերյալ դատարանի եզրահանգումներից յուրաքանչյուրի հետ և վերաքննիչ բողոք բերել:

Միջանկյալ դատական ակտերի պարագայում օրինական ուժի մեջ մտնելու տեսանկյունից վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման և վերաքննության օբյեկտներն ի սկզբանե համընկնում են: Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 140 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Կամ ՀՀ ՔԴՕ 144¹ հոդվածը սահմանում է, որ դատավարության ընթացքում դատարա-

նի՝ առանձին ակտի տեսքով չձևակերպված որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, իսկ դատարանի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Հետևաբար, գործին մասնակցող անձինք վերաքննության կարգով բողոքարկում են առաջին ատյանի դատարանի՝ արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած միջանկյալ դատական ակտերը:

Վերաքննության օբյեկտ հադիսացող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավակարգավորումը ՀՀ ՔԴՕ-ում բավականին խնդրահարույց է: Ինչպես արդեն նշել ենք, միջանկյալ դատական ակտերը վերաքննության կարգով կարող են բողոքարկվել միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում: Ուստի, նախևառաջ անհրաժեշտ է պարզաբանել դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը սահմանելու հարցում օրենսդրի տրամաբանությունը: ՀՀ ՔԴՕ վերլուծությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, դատական հայեցողության շրջանակներում կայացվող միջանկյալ դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն: Կամ այլ կերպ ասած՝ այն դատական ակտերը, որոնց կայացումը օրենքով սահմանված դեպքերում դատարանի իրավունքն է, և ոչ պարտականությունը, վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել սեփական հայեցողությամբ առաջնորդվելու միջանկյալ դատական ակտ կայացնելիս՝ անկախ կողմի միջնորդությանը կամ նման ակտի կայացման համար օրենքով նախատեսված հիմքի առկայությանը, օրինակ՝ արագացված դատաքննության կամ գործի քննությունը հետաձգելու պարագայում (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 125, 119 և այլն): Ուստի, եթե դատարանն ընտրում է օրենքով թույլատրելի վարքագծի տարբերակներից որևէ մեկը, ապա անտրամաբանական է ըստ այդմ կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորություն սահմանելը, քանի որ հայեցողական լիազորությունների իրականացումը բացառապես դատարանի իրավունքն է: Սակայն, դատարանի հայեցողական լիազորությունների իրականացումը չպետք է սահմանափակի կամ խոչընդոտի անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը: Պետությունը պարտավոր է ապահովել մարդու իրավունքների դատական պաշտպանության լիարժեք իրականացումը: Ուստի, ՀՀ ՔԴՕ-ն դատական հայեցողության շրջանակներում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորություն չնախատեսելու հարցում բացառություն է արել անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը խոչընդոտող որոշումների պարագայում: Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 105 հոդվածը սահմանում է գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը, իսկ 106 հոդվածը՝ գործի վարույթը կասեցնելու դատարանի իրավունքը: ՀՀ ՔԴՕ 105 հոդվածով նախատեսված հիմքերի պարագայում դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, իսկ 106 հոդվածում թվարկված հիմքերն ընդամենը հնարավորություն են տալիս դատարանի հայեցողական լիազորությունների իրականացման համար: Սակայն, գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշումը բոլոր դեպքերում վերաքննության կարգով ենթակա է բողոքարկման, քա-

նի որ խոչընդոտում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը: Գործի վարույթի կասեցումը անորոշ ժամկետով դատավարական գործողությունների և գործի քննության դադարեցումն է: Եթե գործի դատական քննություն կամ գործով քաղաքացիական դատավարություն չի իրականացվում, ապա չի իրացվում նաև անձի դատական պաշտպանության իրավունքը: Հետևաբար՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը խոչընդոտող կամ այդ իրավունքը սահմանափակող բոլոր դատական ակտերը ենթակա են բողոքարկման: Իսկ օրինակ՝ գործով վարույթը վերսկսելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՅՅ ԲԴՕ 108 հոդվածը չի նախատեսում:

Քննարկվող խնդրի ուսումնասիրության տեսանկյունից հատկանշական են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2007 թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719, 2010 թ. սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 և 2010 թ. նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ սահմանադրական դատարանը, վերլուծելով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանն առնչվող իրավանորմերը, գտել է, որ օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները՝ միաժամանակ նշելով, որ բողոքարկման ենթակա ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը: Ընդ որում, սահմանադրական դատարանը «բողոքարկելի է» և «բողոքարկման ենթակա չէ» արտահայտությունները մեկնաբանել է միջանկյալ դատական ակտերի՝ անմիջականորեն բողոքարկման ենթակա լինելու և չլինելու հնարավորությունից ելնելով: Այսպես, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի ընթացքում կայացված միջանկյալ ակտերն անձի իրավունքների ենթադրյալ խախտման դեպքում կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում: Մինչդեռ կասեցված կամ ընդհատված վարույթի պարագայում նման հնարավորությունը բացառվում է, և միջանկյալ դատական ակտի դեմ պաշտպանության միակ միջոցն այն անմիջականորեն բողոքարկելու հնարավորությունն է: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ ՅՅ սահմանադրական դատարանը 28.09.2010 թ. ՍԴՈ-918 որոշմամբ արձանագրել է, որ ՅՅ ԲԴՕ 221³ հոդվածի 1-ին կետի «առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով միայն ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում» իրավակարգավորումը վերաբերում է ոչ թե միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանն ընդհանրապես, այլ բողոքարկման կարգին: Ուստի, օրենսդիրը,

յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն, չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի շրջանակներում: Փաստորեն, օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում» և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ միջոցը դրա անմիջական բողոքարկումն է, և օրենսդիրը սահմանել է տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Ինչ վերաբերում է վարույթը վերսկսելուն, ապա սահմանադրական դատարանի 02.11.2010 թ. ՍԴՈ-922 որոշումը հաշվի առնելով գործի քննությունը վերսկսելու մասին միջանկյալ ակտը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում վիճարկելու օբյեկտիվ հնարավորությունը, արձանագրել է, որ այս որոշման անմիջական բողոքարկման կարգ չսահմանելն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

Մեր կարծիքով, դատական հայեցողության շրջանակներում կայացված միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու հնարավորություն նախատեսելիս գերակայությունը պետք է տալ անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելուն: Այս տրամաբանությունը ենթադրում է, որ վարույթի կազմակերպման և գործի քննության արդյունավետությանն ուղղված միջանկյալ դատական ակտը (օրինակ՝ գործի քննությունը հետաձգելու մասին որոշումը) գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում վիճարկելու օրենսդրական հնարավորությունն անհիմաստ է⁹: Ինչ վերաբերում է անձի դատական պաշտպանությունն ապահովելու և վարույթի կազմակերպմանն ուղղված այլ միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորություն չնախատեսելուն, ապա դրանք գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում վիճարկելու հնարավորությունը պետք է համարել իրավաչափ: Օրինակ՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անմիջականորեն վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ, սակայն հետագայում բողոքարկողն այդ որոշումը կարող է վիճարկել ՀՀ ՔԴՕ 91 հոդվածով սահմանված հիմքերով՝ նշելով, որ դատավորը չպետք է հայցադիմումը վարույթ ընդուներ, քանի որ վեճը ենթակա չէ դատարանում քննության,

⁹ Դեռևս Ռուսաստանի 1864 թ. քաղաքացիական դատավարության կանոնագրքով նախատեսվել էր առաջին ատյանի դատարանում վարույթի իրականացման կամ գործի քննության դանդաղության դեմ վերաքննիչ ատյան մասնավոր գանգատ բերելու հնարավորություն (հոդված 168): Հետագայում դատարաններում քաղաքացիական գործերի քննության ժամկետների սահմանումը բողոքարկման նման հնարավորությունը դարձրեց անհիմաստ:

կամ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ և այլն:

Հարկ է նշել նաև, որ ըստ ՀՀ դատական օրենսգրքի 39 հոդվածի 2-րդ կետի՝ «վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում» ձևակերպումից պետք է հանել «բացառիկ» բառը, որով սահմանված նորմը կհամապատասխանեցվի դատական պաշտպանության իրավունքի իրականացման հիմնադրույթներին:

Արդարադատության իրականացումն ընդգրկում է ինչպես վճռով վեճն ըստ էության լուծելը, այնպես էլ այն գործունեությունը, որն ուղեկցում է դրա վերջնական ձևակերպմանը¹⁰: ՀՀ ՔԴՕ 144-րդ հոդվածի 1¹ կետը սահմանում է, որ այն որոշումները, որոնք քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում ենթակա են բողոքարկման, կայացվում են առանձին ակտի ձևով, իսկ դատական քննության ընթացքում լուծում պահանջող հարցերով կայացված այն որոշումները, որոնք ենթակա չեն բողոքարկման, կայացվում են առանց առանձին ակտի ձևով այն ձևակերպելու: Այդ որոշումը հրապարակվում է բանավոր և ներառվում դատական նիստի արձանագրության մեջ (ՀՀ ՔԴՕ հոդված 144, կետ 3): Քանի որ բանավոր կամ «արձանագրային» որոշումները պետք է կայացվեն միայն դատական նիստում, ապա բաց է մնում բողոքարկման ոչ ենթակա այն որոշումների հարցը, որոնք կայացվում են դատական նիստից դուրս: Դատավարության օրենսգրքի տրամաբանությունը կիրառելի չէ բողոքարկման ոչ ենթակա այն միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ, որոնք ևս ձևակերպվում են առանձին դատավարական փաստաթղթով և ըստ էության շեղվում են վերոնշյալ կանոնից: Ինչպես նշում է Ս. Գ. Մեղրյանը, «Առանձին դատավարական փաստաթղթի ձևով պետք է կայացվեն բոլոր այն որոշումները, որոնք դատարանը կայացնում է մինչև գործի դատաքննությունը կամ գործի դատաքննությունն ավարտելուց հետո»¹¹: ՀՀ ՔԴՕ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առանձին ակտի ձևով են կայացվում հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցի ապահովում կիրառելու, հայցի ապահովումը վերացնելու, նախնական դատական նիստ հրավիրելու, գործը դատաքննության նշանակելու, ապացույցներ պահանջելու, փորձաքննություն նշանակելու, արագացված դատաքննություն կիրառելու, գործի դատաքննությունը վերսկսելու, դատական նիստի արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին՝ անմիջականորեն բողոքարկման ոչ ենթակա որոշումները և այլն (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 23, 49, 60, 90, 97, 99, 125, 131, 149, 149⁸, 149⁹ և այլն):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կատարյալ չէ նաև միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավակարգավորումը սահմանելիս: Իրավական որոշակիության անհրաժեշտությունը թելադրում է միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնա-

¹⁰ Стен Загайнова С. К. Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д. ю. н. Екатеринбург, 2008, էջ 323:

¹¹ Ս. Գ. Մեղրյան, նշվ. աշխ., էջ 50:

րավորությունն օրենսդրորեն սահմանելիս նաև նախատեսել, թե ինչ ժամկետներում, ում կողմից և ինչ կարգով կարող են բողոքարկվել առաջին ատյանի դատարանի որոշումները: Մինչդեռ ոչ բոլոր դեպքերում է ՀՀ ՔԴՕ-ն հանգամանակից կարգավորում միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կարգը: Մասնավորապես, հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու, դատական տուգանք կիրառելու մասին որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով եռօրյա ժամկետում (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 91, 92, 104, 108, 115): Ընդ որում, ելնելով կոնկրետ միջանկյալ դատական ակտից՝ տարբեր է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Ամեն դեպքում, օրենսդիրը միջանկյալ դատական ակտը բողոքարկելու հնարավորություն է ընձեռել այն անձանց, ում իրավունքներն ուղղակիորեն խախտվում են դատարանի համապատասխան որոշմամբ: Այսպես, հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները կարող են բողոքարկվել միայն հայցվորի կողմից: Նման մոտեցումն արդարացված է, քանի դեռ դատարանը հայցադիմումը վարույթ չի ընդունում և քաղաքացիական գործ չի հարուցում, հայցով պատասխանողը դատավարական կարգավիճակ ձեռք չի բերում և չի օգտվում նաև գործին մասնակցող անձի իրավունքներից: Բացի այդ, հայցադիմումը վարույթ չընդունելով՝ ենթադրաբար խախտվում է հայցվորի դատական պաշտպանության իրավունքը: Հարուցված քաղաքացիական գործի կամ վարույթի իրականացման ընթացքում կայացվող բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկել գործին մասնակցող անձինք, օրինակ՝ գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը (ՀՀ ՔԴՕ հոդված 108): Սակայն դատավարության օրենսգիրքը հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը վերաքննիչ բողոքարկելու կարգը սահմանելիս թերացել է գործին մասնակցող անձանց կողմից վերոնշյալ որոշումը բողոքարկելու համար հավասար պայմաններ ապահովելու հարցում: Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 104 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող են բողոքարկել վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում: Հարց է առաջանում՝ ինչպես է պատասխանողը տեղեկանալու հայցվորի կողմից առաջին ատյանի դատարանի որոշումը ստանալու մասին, որպեսզի իրականացնի վերաքննիչ բողոքարկման իր հնարավորությունը: Մեր կարծիքով, գործին մասնակցող բոլոր անձանց՝ հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը չուղարկելն ուղղակիորեն հակասում է կողմերի դատավարական իրավահավասարությանը և տվյալ պարագայում խոչընդոտում է պատասխանողի բողոքարկման, հետևաբար նաև դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը: Մինչդեռ, հայցն առանց քննության թողնելով՝ կարող են խախտվել ինչպես հայցվորի, այնպես էլ պատասխանողի շահերը, քանի որ դատարանը, օրինական և հիմնավորված հայցը բավարարելով, պաշտպանում է հայցվորի, իսկ անհիմն հայցը մերժելով՝ պատասխանողի իրա-

վունքները: Ուստի տրամաբանական է, որ պատասխանողը դատարանից պահանջի շարունակել գործի քննությունը, որպեսզի անհիմն հայցը մերժելու վերաբերյալ վճռի կայացմամբ հետագայում բացառի իր դեմ նույնական հայց հարուցելու հնարավորությունը: Բացի այդ, ՀՀ ՔԴՕ-ն նախատեսել է, որ վճիռը պարզաբանելու, վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը կարող են բողոքարկվել, սակայն բողոքարկման կարգ չի սահմանել (ՀՀ ՔԴՕ հոդված 143, մաս 4): Նման պարագայում մնում է հղում կատարել միայն ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվածի 3-րդ մասի վրա, որի համաձայն՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Երկրորդ կետեր, որ ՀՀ ՔԴՕ-ն միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ընդհանուր կարգ և ժամկետներ սահմանելու, իսկ անհրաժեշտության դեպքում առաջին ատյանի դատարանի առանձին որոշումների բողոքարկման համար նախատեսելու հատուկ ժամկետներ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են դեպքեր, երբ ուղղակիորեն ամրագրվել է դատական ակտի՝ «բողոքարկման ոչ ենթակա» լինելու հանգամանքը: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի¹² 11 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, 13 հոդվածի 3-րդ մասով, սահմանված դեպքերում դատարանի՝ արբիտր նշանակելու կամ նշանակման ընթացակարգն ապահովող միջոցներ ձեռնարկելու, արբիտրի բացարկի հարցը լուծելու մասին որոշումները ենթակա չեն բողոքարկման, ինչն ուղղակիորեն նախատեսվել է օրենքով (11 հոդված, մաս 5):

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ ներկայումս վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկման ենթակա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝

1. հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը (91 հոդված, մաս 4),
2. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը (92 հոդված, մաս 4),
3. հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը (104 հոդված, մաս 3),
4. գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը (108 հոդված, մաս 2),
5. դատական տուգանք նշանակելու մասին որոշումը (115 հոդված, մաս 8),
6. լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը (142 հոդված, մաս 5),
7. վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը (143 հոդված, մաս 4):

Ինչպես տեսնում ենք, ոչ բոլոր միջանկյալ դատական ակտերն են ենթակա բողոքարկման, ինչը սահմանափակում է անձի իրավունքները:

¹² ՀՕ-55-Ն, ՀՀՊՏ, № 8 (582), 31.01.2007:

Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաբնության իրավունքները խախտող բոլոր միջանկյալ դատական ակտերն անմիջականորեն բողոքարկելու հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում դրանց բողոքարկման ընդհանուր կարգ սահմանել:

ВАГЕ ОГАНЕСЯН – *Объект права апелляционного обжалования в гражданском процессе.* – В статье исследуются судебные акты по гражданским делам, подлежащие обжалованию в порядке апелляции. Рассматриваются судебные акты суда общей юрисдикции первой инстанции; особое внимание обращено на механизмы апелляционного обжалования судебных актов, решающих и не решающих дело по существу.

Законодательство РА не исключает возможности оспорить промежуточные судебные акты в рамках обжалования актов, решающих дело по существу, хотя закон и не устанавливает непосредственной возможности обжаловать их в порядке апелляции. В противном случае было бы нарушено право человека на справедливое судебное разбирательство.

Кроме того, в статье дифференцированы понятия объекта и предмета апелляции. Рассматривается также вопрос о полном или частичном обжаловании актов, решающих дело по существу. При этом делается вывод, что апелляционная инстанция, скованная объектом апелляции, не скованна предметом апелляционного обжалования и может свободно осуществлять свои предусмотренные законом полномочия.

Анализ подлежащих обжалованию судебных актов приводит к заключению, что Гражданский процессуальный кодекс РА, предусматривая в отдельных случаях возможность обжаловать промежуточные судебные акты, не устанавливает для этого конкретных сроков и механизмов.

В статье выдвигаются предложения по совершенствованию норм, устанавливающих возможность и механизмы обжалования в порядке апелляции актов суда первой инстанции.

VAHE HOVHANNISYAN – *The Object of the Right to Appeal in Civil Process.* – Civil law judicial acts subject to appeal to the Appellate Court of the Republic of Armenia are studied in the presented article. The author analyses both judicial acts settling and not settling the case in essence of the first instance court of general jurisdiction and pays special attention to the mechanisms of their appeal. In order to identify possible shortcomings, the author has focused on the provisions of RA Judicial Code and the RA Civil Procedure Code that prescribe the possibility of appeal, the decisions of the RA Constitutional Court that include legal approaches to the right to appeal, as well as the relevant judicial practice. It has been revealed that though Armenian legislation doesn't provide for direct possibility for appealing interim judicial acts that can take place within the framework of appealing judiciary acts that are settled in essence. However, to have the possibility of appealing interim judiciary acts the latter ones need to have infringed an individual's right to a fair trial.

In addition, the author makes a differentiation between the concepts of object and matter of appeal, as well as discusses the possibility of completely or partially appealing acts that settle a case. The following conclusion was figured out: though being bounded by the object of appeal, the Court of Appeals isn't constrained by the matter of appeal and may freely exercise powers prescribed by the law.

The analysis of the judicial acts subject to appeal allowed making a conclusion that in spite of providing the possibility of appealing the interim judicial acts of the first instance court of general jurisdiction in certain cases, the RA Civil Procedure Code hasn't defined certain time periods and mechanisms for appeal of the latter ones. The author proposes improvements of the provisions setting the possibility and mechanisms of appealing the judicial acts of the first instance court of general jurisdiction that are subject to appeal.